

9666



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 03 » 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 175 - 24

Նախաձեռնող՝

«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ
Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային փող. 4շենք

Գործունեությունը՝

Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխություն
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 175 - 24

«03» սեպտեմբերի 2024թ.

Սյունիքի մարզի Գեղանուշի պոչամբարի փոփոխված նախագծով նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ

/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Կապան համայնք, Կապան և Գեղանուշ բնակավայրեր

Ներածական մաս. Գեղանուշի պոչամբարը գտնվում է Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան և Գեղանուշ բնակավայրերի վարչական տարածքում՝ Գեղանուշ գյուղից 800-1000 մ հեռավորությունների վրա: Պոչամբարը տեղակայված է Գեղանուշ գետի կիրճում: Շրջանը ցածրլեռնային է, նիշերի բացարձակ բարձրությունը ծովի մակերևույթից՝ 700մ-ից մինչև 1250մ: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել գործող պոչամբարի նախագծում կատարել փոփոխություն: Պոչամբարի նախագծի փոփոխությունը չի նախատեսվում լեռնահատկացման սահմաններից դուրս:

Գործունեության տարածքը ներառվում է Կապան և Գեղանուշ բնակավայրերի, գյուղատնտեսական, անտառային, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության մի շարք հողամասերի սահմաններում (համաձայն կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված կարծիքի):

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի բ) ենթակետի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործող պոչամբարի նախագիծը 2006 թվականի փետրվարի 24-ին ստացել է բնապահպանական փորձաքննության N 17 դրական եզրակացությունը: Պոչամբարի լցնովի տիպի է: Նախատեսվում է իրականացնել պոչամբարի հյուսիսային և հարավային պատվարների բարձրացում՝ երկու փուլով: Յուրաքանչյուր փուլում պատվարի բարձրությունը



կազմելու է 10մ: Պատվարի բարձրացումն իրականացվելու է 2,5 մետր քայլերով: Գեղանուշ պոչամբարի պատվարի բարձրացման վերջնական նիշը նախատեսվում է 851 մ, նախագծային ծավալը կազմում է 11,73 մլն. մ³: Նախագծով նախատեսված տարածքը զբաղեցնելու է 40 հա: պոչամբարը զբաղեցնում է 32 հա տարածք, ենթակառուցվածքները՝ 1,5 հա, պոչատարը՝ 7,5 հա: Տվյալ նախագծով պոչատարի և պոմպակայանի կառույցների փոփոխություն չի նախատեսվում: Նախագծման համար հիմք են հանդիսացել պոչամբարի կայունության հաշվարկները:

Համաձայն 2023 թվականի մարտի 31-ի տվյալների, պոչամբարում կուտակված են 7.35 մլն.մ³ պոչեր: Հաշվի առնելով, որ նախագծով պոչամբարի վերջնական ծավալը կազմելու է 11,73 մլն.մ³ պատվարի բարձրացումը կստեղծի 4.375 մլն.մ³ ծավալ, ինչը կապահովի հարստացուցիչ ֆաբրիկայի աշխատանքը ևս 6 տարի: Պատվարի բարձրացման նպատակով նախատեսվում է կառուցել երկրորդային պատվարներ: Կառուցումը, նախատեսվում է իրականացնել հանքի դատարկ ապարներով, որոնք ավտոինքնաթափերով տեղափոխվելու են դեպի պոչամբարի աշխատանքային տեղամաս: Անհրաժեշտության դեպքում նաև օգտագործվելու է ընկերության կողմից շահագործվող 1 լցակույտում կուտակվող դատարկ ապարը: Պատվարի բարձրացման և ամրաբեռնման աշխատանքները կատարվելու են տարեկան 310 օր, օրական 8 ժամ: Այդ ժամանակահատվածում 20 տ տարողությամբ ինքնաթափերով տեղափոխվելու է 350 000 տ դատարկ ապար: Տեղափոխման ճանապարհի երկարությունը կազմելու է 11,06 կմ, որից 2,04 կմ՝ գրունտային:

Նախատեսվող գործունեության հետևանքով ընդլայնված տարածքում հողի բերրի շերտի հզորությունը 0-25 սմ է:

Պատվարի յուրաքանչյուր շերտը կառուցելուց հետո նրա երկայնքով տեղադրվելու է բաշխիչ խյուսատարը, որի վրա հավասարաչափ հեռավորություններով նախատեսվում են կիսախողովակներ: Պոչերը կիսախողովակներից համաչափ ուղղվելու են պոչամբար: Պոչերի տեղադրումը կատարվելու է երկու կողմերից՝ հյուսիսային և հարավային պատվարներից, հավասարաչափ: Կիսախողովակներից պոչերը հոսելու են պատվարի վրայով, որի ընթացքում տեղի է ունենալու հատիկների անջատումը և բաշխումը՝ ըստ խոշորության (սեգրեգացիա): Պոչերի մեջ գտնվող խոշոր հատիկները նստելու են պատվարին մոտ հատվածներում, իսկ մանր մասնիկները (շլամները) ջրի հետ հոսելու են դեպի պոչամբարի պարզեցման լճակ: Պոչատարն իրենից ներկայացնում է 2.6 կմ ընդհանուր երկարությամբ երկու պողպատե խողովակ, մեկը՝ 325 մմ տրամագծով և 8-12 մմ պատերի հաստությամբ և մյուսը՝ 219 մմx8-10մմ: Պոչատարով ուղղվող խյուսում պինդ մասի պարունակությունը կազմում է 22%: Խողովակները տեղադրված են բետոնե հենարանների վրա: Ջերմաստիճանային տատանումների կոմպենսացման համար խողովակաշարի վրա նախատեսված են խցուկային կոմպեսատորներ: Խողովակներից մեկը գործող է, մյուսը՝ պահուստային: Հարստացման պրոցեսում առաջացած պոչերն ինքնահոս ուղղվում են պոմպակայան խողովակաշարով, որի երկարությունը 480 մ է: Պոմպակայանից դեպի պոչամբար գործում է ճնշումային պոչատարը՝ 2.12 կմ երկարությամբ: Պոմպակայանում Ø325 պոչատարի համար տեղադրված են իրար հաջորդաբար միացված 4 հատ Warman 8/6 պոմպեր, իսկ Ø219 պոչատարի համար տեղադրված է իրար հաջորդական միացված 4 հատ Warman 6/4 պոմպեր: Պոմպակայանում տեղադրված են հակափոթարային հակադարձ փականներ, որոնք արգելակում են պոմպի աշխատանքը պոչատարի վթարի դեպքում: Պոչատարի վթարային իրավիճակների համար նախատեսված են վթարային դատարկման ավազաններ՝ 600 մ³ ծավալով: Ուղեգծի ամբողջ երկայնքով տեղադրված են



կիսախողովակներ՝ կոմպենսացիոն խցիկներով, որտեղ տեղադրված են վթարային ահազանգման միջոցներ: Վթարային դատարկման խողովակը տեղադրված է նաև ջրի շրջանառու համակարգի բուֆերային բաքի վրա, որի օգնությամբ թափվածքը ուղղվում է պոչատար: Ջուրը պոչամբարի պարզեցման լճակից հեռացվում է կոլեկտորի միջոցով: Կոլեկտորի վրա տարբեր նիշերում նախատեսված են երեք հատ ջրընդունիչ հորեր: Կոլեկտորը կազմված է մետաղական խողովակից $\varnothing 530 \times 10$ մմ և վերցված է երկաթբետոնե պատյանի մեջ: Ջրընդունիչ հորերը կազմված են $\varnothing 1020 \times 9$ մմ մետաղե խողովակից, որի վրա շախմատաձև դասավորությամբ բացված են 100 մմ տրամագծով անցքեր, որոնց վրա տեղադրված են փականներ: Պոչամբարի պարզեցման լճակի բարձրացմանը զուգահեռ անցքերը փակվում են փականներով: Պարզեցված ջուրը ինքնահոս տեղափոխվում է դեպի պոմպակայան, որտեղից մղվում է դեպի հարստացուցիչ ֆաբրիկա:

Հարավային պատվարի երկարությունը կազմում է 201 մ, հյուսիսայինը՝ 364 մ: Ամրաբեռնումից հետո հյուսիսային պատվարի հիմքի լայնությունը կազմելու է 80 մ, իսկ հարավայինինը՝ 50 մ:

Նոր ջրհեռացման աշտարակներից պոչամբարի պարզվածքը հեռացվելու է դեպի նախագծով նախատեսվող կոլեկտոր և ուղղվելու է ջրի շրջանառու համակարգ: Գեղանուշ գետի ջրերի հեռացման համակարգը պոչամբարի տարածքից մնալու է անփոփոխ: Պոչամբարից ջրի գումարային բնական կորուստը 01.03.2023թ. դրությամբ կազմում է 54.5 հազ.մ³/տարի:

Պոչեր տեղափոխվող խյուսի քանակը տարեկան հավասար է՝ 1 687 800 մ³:

Խյուսի քաշը տոննայով՝ 2 362 920 տ, որտեղ՝ 1,4 տ/մ³ խյուսի ծավալային կշիռն է:

Ջրի քանակը խյուսում հավասար է՝ 1 780 920 տ: Տարեկան 1 381 920 մ³ քանակով ջուր ջրի շրջանառու համակարգով վերադառնում է հարստացուցիչ ֆաբրիկա:

Գեղանուշ գետի ջրերի հեռացումը, շրջանցելով պոչամբարը, իրականացվում է 1114,45 մ երկարության և 139 մ³/վրկ թողունակության ջրհեռ թունելի միջոցով: Թունելը երկաթբետոնյա է, երկարությունը 1114,45 մ է, թեքությունը՝ $i=0,02$, ընդլայնման կտրվածքի մակերեսը լույսում՝ 15,83 մ²: Թունելի վերջնամասում առկա է 122,5 մ երկարությամբ արագահոս, որի լայնությունը 5 մ է:

Պոչամբարի շինաշխատանքների ժամանակ աշխատակիցների համար խմելու ջուրը բերվելու է բալոններով: Կենցաղային կարիքներն ապահովվելու են հարստացուցիչ ֆաբրիկայում, որտեղ գործում են ցնցուղարանները, ճաշարանը, արտահագուստի լվացքատունը: Խմելու ջրի այդ բոլոր ծախսերը հաշվարկվել են ընկերության ջրօգտագործման-ջրահեռացման նորմերում, որի հիման վրա 2023թ.-ին ձեռնարկությունը ստացել է նոր ջրօգտագործման թույլտվություն՝ N 0052-23:

Հարստացուցիչ ֆաբրիկաների շլամներն ող պոչանքները հադիսանում են 4 դասի վտանգավորության թափոն: Ծածկագիրը ըստ ՀՀ-ում գոյացող թափոնների դասակարգչի՝ 34010110 04 01 4:

Թափոնների պահեստավորման համար ընկերությունը ստացել է լիցենզիա: Կենցաղային աղբի քանակը նախատեսվում է 2,7 մ³/տարի, կամ 0.68 տ/տարի: Կենցաղային աղբը նախատեսված է կուտակել դրա համար նախատեսված աղբարկղերում, որից հետո պարբերաբար հեռացնել ձեռնարկության տարածքից համաձայն պայմանագրի: Մեքենաների և տեխանիկական միջոցների, տարբեր սարքավորումների սպասարկման ժամանակ առաջացած թափոնները՝ տարեկան 15 կգ քանակով, նախատեսված է համաձայն համապատասխան լիցենզիա ունեցող «Ամ-էսկա» ՍՊԸ-ին:



- Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.
- Ամրաբեռնման տարածքից հողի բերրի շերտի հանում և բլուրների տեսքով պահում պոչամբարի տարածքում՝ հետագա ռեկուլտիվացման աշխատանքների համար:
 - Հանվող, պահպանվող հողի բերրի շերտի պահպանության միջոցառումներ:
 - Ռեկուլտիվացման աշխատանքների իրականացում պատվարի բարձրացմանը և ամրաբեռնմանը զուգահեռ՝ ամեն 2,5 մ-ը մեկ:
 - Պոչամբարի պատվարների բարձրացման և ամրաբեռնման համար օգտագործվելու են ստորգետնյա հանքի դատարկ ապարները, ինչը թույլ կտա զգալի կրճատել հանքի հարակից տարածքում կուտակվող դատարկ ապարների քանակը և լցակույտի տակ հատկացվող մակերեսը:
 - Ամրաբեռնման շեպերի վրա նախատեսվում է անձրևաջրերի հեռացման համակարգ:
 - Փոշեգոյացման նվազեցման նպատակով պատվարների և ամրաբեռնման մակերեսը չոր և շոգ եղանակին պարբերաբար ջրցանվելու է:
 - Պոչամբարի պարզվածքը ուղղվելու է շրջանառու ջրի համար նախատեսված պոմպակայան և այնտեղից՝ հարստացուցիչ ֆաբրիկա:
 - Պատվարի վրա, նրա երկարությամբ, տեղադրվելու են պիեզոչափեր՝ պատվարից ջրի ներծծումը ստուգելու համար: Հերթափոխի ընթացքում պիեզոչափերում որոշվելու է ջրի մակարդակը և գրանցվելու է մատյանում:
 - Պատվարի պարագծով, դրենաժի ուղղությամբ, նախատեսվում է դրենաժային համակարգ՝ հորերով: Հորերում կուտակվող ջրերը կախված ջրի քանակից վերադարձվելու են պոչամբար կամ միախառնվելու են պոչամբարի պարզվածքի ջրերին և օգտագործվելու են արտադրական գործընթացում:
 - Պոչամբարից արտադրական կեղտաջրերի արտահոսք բաց ջրային ռեսուրսներ բացառվում է:
 - Պոչամբարի պոմպակայանում տեղադրված են 400 մ³ և 600 մ³ վթարային ավազաններ՝ պոչերի հավաքման և պոչամբար մղման համար:
 - Արգելվում է պոչամբարի տարածքում թափոնների և կենցաղային աղբի կուտակումը:
 - Պոչատարի պոմպակայանում տեղադրված են վթարային ավազաններ՝ վթարի դեպքում պոչերը հավաքելու և պոչամբար ուղղելու համար:
 - Արգելվում է պոչամբարի տարածք մուտքը առանց անցագրի և անհատական պաշտպանիչ միջոցների:
 - Տեխնիկայի աշխատանքի ժամանակ պահպանել անվտանգ հեռավորությունը:
- Գործունեության իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- Գեղանուշ գետի ջրերի մոնիթորինգ մինչև պոչամբարը և պոչամբարից հետո՝ շաբաթական մեկ անգամ:
 - Գրունտային ջրերի մոնիթորինգ՝ եռամսյակը մեկ անգամ:
 - Հողերի մոնիթորինգ՝ տարեկան երկու անգամ:
 - Կենսաբազմազանության մոնիթորինգ՝ երեք տարին մեկ անգամ:
 - Պոչամբարի և հարակից տարածքներում մթնոլորտային օդի մոնիթորինգ՝ տասնհինգ օրը մեկ անգամ:
 - Մոտակա բնակավայրում աղմուկի մոնիթորինգ՝ տաս օրը մեկ անգամ:



Ընդհանուր մոնիթորինգի իրականացման նպատակով նախատեսվում է 9680 հազ. դրամ: Պոչամբարի մակերեսի ռեկուլտիվացիոն աշխատանքները նախատեսվում են պոչամբարի ծավալի սպառումից հետո, երբ դադարի հարստացուցիչ ֆաբրիկայից պոչերի մատուցումը պոչամբար:

Ընդամենը ռեկուլտիվացիայի համար նախատեսվում է 95337,0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Սյունիքի մարզի Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Սյունիքի մարզի Կապան համայնքում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Սյունիքի մարզպետարանը: Ստացված կարծիքները հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտայի օդի, ջրային ռեսուրսների, հողային ծածկույթի, պոչամբարի հարակից տարածքների կենսաբազմազանության) մշտադիտարկումներ:

-Գործունեության իրականացման ընթացքում բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում իրականացնել առանձնացման, տեղափոխման, պահպանության և պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:

-Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

-Նախագծով տարածքների մեջ ներառված 0.3161 հա մակերեսով պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերի հետ կապված, մինչև աշխատանքների իրականացնելն անհրաժեշտ է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ կնքել վնասի փոխհատուցման պայմանագիր:

-Անհրաժեշտ է մինչև աշխատանքների սկսելն իրականացնել ջրահեռացման թունելի գործիքային մասնագիտական ուսումնասիրություն, ուսումնասիրել ընդհանուր թունելի վիճակը, պարզել բետոնի որակը, բետոնի հետնամասում առկա խորշերը, իրականացնել բետոնի որակի մանրակրկիտ հետազոտություն, նմուշառում՝ ֆիզիկամեխանիկական և քիմիական անալիզի համար և ուսումնասիրության արդյունքների հիման վրա տալ համապատասխան լուծումներ:

- Գործունեության իրականացման ընթացքում ներգրավել համայնքի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել համայնքային բյուջե ֆինանսական



ներդրումներն ու անհրաժեշտ սոցիալական ծրագրերը:

-Մինչև գործունեության իրականացումը, անհրաժեշտ է կատարել գործունեության իրականացման տարածքի հողերի նպատակային նշանակության փոփոխություն:

-Անհրաժեշտ է փորձաքննության ներկայացնել ռեկուլտիվացիայի նախագիծը:

ԵԶՐԱՓՈՎԻՉ ՄԱՍ

«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Սյունիքի մարզի Գեղանուշի պոչամբարի փոփոխված նախագծով նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ



Երիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան